

Յ Լ ՈՒ Լ Ջ, Լ Բ Լ Ն

Ուղիղ և գեղեցիկ դիտաւորութիւն , ամենայարմար միջոց , հաստատուն յոյս , անխոնջ աշխատութիւն , և ամենէն աւելի ճշմարիտ ազգասիրութիւն , ասոնք եղան ԲԱԶՄԱՎԷՊԻՆ առաջին տարուանը մէջ մեր առաջին քաջալերող և մխիթարող մտածութիւնները : Եւ յիշաւի . մարդու մը՝ իր ազգին լուսաւորութեանն ու յառաջագիմութեանը համար աշխատելէն աւելի գեղեցիկ ու վսեմ ի՞նչ դիտաւորութիւն կրնայ ըլլալ . աս դիտաւորութեան հասնելու համար ալ ուրիշ ի՞նչ յարմար միջոց կրնայ ըլլալ , բայց եթէ ընտանի և փոփոխական ու զուարճալի ոճով մը ոչ միայն դիւրիմաց բաները սորվեցընել չգիտցողին , հապա նաև բարակ ու խորունկ գիտելիքները մանրացուցով կամ դիտակով ցուցընելու մը պէս՝ պարզել , մեկնել , ու ամենուն հասկըցուելու բաներ ընել . բարոյական խրատները ծարաւի հոգւոց յստակ ջրի պէս խմցընել . մարդկային խելքին գիւտերն ու հնարքները իբրև հայլիի մը մէջ ցուցընել , միանգամայն գործնական յորդորանքով քաջալերել որ կարդացողն ալ սիրտ ընէ նոյնպէս խելք բանեցընելու և իր ճարտարութիւնն 'ի գործ դնելու . մէկ խօսքով , տասնըհինկ օրը մէյմը իբր թէ ազգին մէջի տկարներուն ձեռքէն բռնած՝ բոլոր աստուածային և մարդկային հրաշալեաց հանդիսարանին մէջ (որ աս աշխարհքս է) քալցընել ու մէկիկ մէկիկ հասկըցընել : Իհա աս է մեր ընտրած ու բռնած միջոցը աս օրագրիս մէջ :

Իմէն մարդ գիտէ թէ այսպիսի միջոց մը ինչպէս որ պէտք է գործադրելը քիչ աշխատանքով չըլլար , մանաւանդ առջի բերանը . բայց ան հաստատուն յոյսն որ ունինք՝ թէ օր մը պիտի սկսինք աս աշխատանքին պտուղը վայելել , կամ գէթ մեր յաջորդներուն վայելեցընել , և ան յոյսը միշտ վառ պահող

ազգասիրութեան կրակը, ոչ միայն ամէն աշխատանք ու յոգնածութիւն մոռնալ կուտան մեզի, այլ նաև այնպէս կ'երեցնեն թէ հիմակուրնէ սերմանիքը բուսեր աճեր են, պտուղները հասունցեր են, ամէն բաղձանք կատարուեր է: Այս աս մեր վստահութեանը անհիմն չըլլալուն, ու մեր եռանդեանը պարզ երևակայութիւն չըլլալուն յայտնի նշանն աս է, որ իրօք տեսանք ուրախութեամբ անցած տարուան մէջ՝ թէ ընդհանրապէս Ռազմավէպին կարգացողները օրէ օր աւելցան, հաւնեցան, գովեցին:

Ուրեմն կը մնայ որ մենք ալ այսպիսի գործնական բարեսիրութեան փոխարէն՝ մեր շնորհակալութիւնը ոչ միայն խօսքով, այլ և գործով յայտնենք աս երկրորդ տարուանս մէջ. այսինքն թէպէտ և ընդհանուր կարգն ու ոճը նոյն պահէնք, բայց ամենայն կարելի կատարելագործութիւնները ջանանք ընել, մանաւանդ ոճին պարզութեանը կողմանէ, որ աս տեսակ գրուածքի մէջ առաջին պահանջուած յատկութիւնն է: Ար բաղձայինք նաև լեզուն և ուղղագրութիւնը աւելի կանոնաւորել. բայց քանի որ աս մեր աշխարհաբառը հաստատուն քերականութիւն մը չունի, մենք ալ հարկ համարեցանք մէկ քանի մանր փոփոխութիւններով միայն գոհ ըլլալ նաև աս տարի: Ուստի ուղղագրութեան մէջ ալ միշտ ջանալով սովորական ոճին հետեւիլ, բայց միանգամայն խիստ ռամկական հնչմունքները անզգալի փոփոխութեամբ մը շտկել ու կակրղցնել, հիմակուրնէ կը ծանուցանենք կարգացողներուն, որպէս զի թէ որ ասոր և այսպիսի նիւթերու մէջ իրենց բաղձանքը բոլորովին կատարուած չտեսնեն՝ գիտնան թէ արդեւքը հասարակաց օգուտն է որ ամէն բանէն աւելի կը դիտենք՝ մանաւանդ աս գործքիս մէջ: Այն դիտաւորութեամբ ահա կը սկսինք երկրորդ տարուոյս Ռազմավէպն ալ, և յուսանք որ Աստուծով երրորդ տարուանը եռապատիկ շնորհակալութեամբ կ'ընծայենք մեր Ազգին և հայրենեաց:

